Լրատու Newsletter

ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ

K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk

Website: www.armenianschool.org.uk

Մարտ 2021
Լրատու թիւ 20

ԱՆԻ

ՎԱՆ

ԿԱՐՍ

Ողջոյնի Խօսք

Մենք հրաժեշտ տուեցինք հայ ժողովրդի համար այնքան ցաւալի և տխուր 2020 թւականին:

2020-ը այնպիսի հարուած հասցրեց մեր ազգին ու պետութեանը, որ բառերն անգամ կարկամում են մեր շուրթերին: Մի կողմից թագավարակը, միւս կողմից 2020 թւականի սեպտեմբերի 27-ին սկսուած 44 օրեայ դաժան պատերազմը:

Անհաւասար պատերազմում մեր 18 տարեկան տղաները, զինուորները, սպաները, կամաւորները իրենց կեանքը վտանգի ենթարկելով, իրենց կեանքի գնով պաշտպանում էին հայրենիքը, անհաւասար մարտերում նրանք աննկարագրելի սխրանքներ էին գործում:

Պէտք է մեր մէջ ուժ գտնենք, որպէսզի 2021 թւականին կարողանանք վերականգնել մեր խարխլուած հաւատը, որպէսզի հաւաքական ջանքերով դիմակայենք բազում մարտահրաւէրները: Այս ծանր իրավիճակում մենք պէտք է դրսևորենք աննկուն կամք ու վճռականութիւն, Հայրենիքի շուրջ համախմբենք համազգային ներուժը, քանզի հայրենափրկութեան գործը բոլորինս է և համախմբում է պահանջում Հայաստանում, Արցախում ու Սփիւռքում:

Ապրելով և շենացնելով կարող ենք ապացուցել, որ թեկուզ մի բուռ հողի վրայ էլ հայը կարարի և կապրի արժանապատիւ:

Սեպտեմբերի 13-ին հաշուի առնելով թագակիր համավարակի հետ կապած կառավարութեան սահմանափակումները, դասերը վերսկսեցինք խստօրէն հետևելով առողջութեան ապահովութեան համար սահմանուած կանոններին:

Դեկտեմբերի 13-ին վարժարան դասարան առ դասարան այցելեց Ձմեռ Պապիկը երեխաները երգերով և արտասանութիւններով դիմաւորեցին նրան: Ձմեռ Պապիկը բարձր դասարանների աշակերտներին նուիրեց << Ո՞վ է հայը>> գիրքը, միջին դասարանի աշակերտներին երկլեզու հայերէն-անգլերէն հեքիաթների գիրք, իսկ փոքրիկներին նկարչական տետր:

Յունուարի 10-ից թագակիր (Coronavirus) համավարակով վարակուածների քանակի շեշտակի աճի պատճառով դպրոցում դադարեցրիք դասերը և դասաւանդման գործընթացը տեղափոխեցինք հեռավար ուսուցման հարթակ:

Հեռավար հարթակում փետրուարի 14-ին կազմակերպեցինք Վարդանանց հերոսամարտի 1570 ամեակին նուիրուած հանդէսը աշակերտների մասնակցութեամբ:

Այս համարում Դուք կը ծանօթանաք 2020-2021 ուսումնական տարւայ առաջին և երկրորդ եռամսեակների ընթացքում կատարուած աշխատանքների մասին:

Ռ Թաթուլեան
Տնօրինուհի

Վերամուտ – Back to School

Սեպտեմբերի 13-ին հաշուի առնելով թագակիր համավարակի հետ կապված կառավարութեան սահմանափակումները, դասերը վերսկսեցինք խստօրէն հետևելով առողջութեան ապահովութեան համար սահմանուած կանոններին:

Our Armenian School opened on the 13th September not in the usual way but with staggered start and finish, staying in bubbles and social distancing. Despite all the restrictions, the children adapted well to their new “normal”. The school made sure that everything was conducted according to government guidance.

Դպրոցէն ներս ունինք “Առաջարկներու Տուփ” մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:

Զմեռ Պապիկի այցը

Դեկտեմբերի 13-ին Գ Թահթաեան Կիրակնօրեայ ազգային վարժարան այցելեց Զմեռ Պապիկը:
Այս տարի երեխաների և Զմեռ Պապիկի հանդիպումը շատ բացառիկ էր և նման չէր նախորդ տարիների հանդիպմանը…
Մեր փոքրիկները իրենց մանկական գեղեցիկ ոտանաւորներով և երգերով դիմաւորեցին նրան իրենց դասարաններում:
Սիրելի աշակերտներ, ուսուցչուհիներ և ծնողներ շնորհաւորում ենք Ձեզ և Ձեր ընտանիքներին Ամանորի և Սուրբ Ծննդեան տօների առթիւ, թող գալիք տարին Ձեզ բերի քաջառողջութիւն, անսպառ եռանդ, երջանկութիւն, սէր և միասնութիւն: Թող 2021 թւականը Մեր Հայրենիքի համար լինի խաղաղութեան, միասնութեան և յաջողութեան տարի:

Santa’s visit to school was different this year; instead of the usual celebrations in the hall, Santa went to the children’s classrooms and after spending a few minutes listening to their poems and songs, he gave them each a present and wished them all well.

Կաղանդ Պապա, Կաղանդ Պապա...

This Christmas, we did not forget the plight of the children of Artsakh after the unfortunate outcome of the war. Our children and their families responded to the charitable initiative of the Shoebox Appeal and filled boxes with presents to be sent to Artsakh. This small act resulted in big smiles on the faces of all these innocent children displaced from their homes.

Սուրբ Վարդանանց Տօն

Աւանդոյթ է դարձել փետրուարին տօնել Վարդանանց հերոսամարտի տարեդարձը: Վարդանանց հերոսամարտը հայ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն էջերից մէկն է: Այս տարի լրանում է Աւարայրի ճակատամարտի 1570 ամեակը:

1570 տարի է անցել Վարդանանց պատերազմից, սակայն նրա ոգին ու զօրութիւնն այնքան հզօր է ու տպաւորիչ, որ դարեր շարունակ մեր ժողովուրդը ոգեշնչելով Վարդանանց հերոսների կերպարներով պայքարել է հանուն հայրենիքի ազատութեան և անկախութեան:

Այս տարի Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանում փետրուարի 14-ին հեռավար տօնեցինք <<Վարդանանց տօնը>>: Հանդէսին մասնակցեցին ինչպէս մանկապարտէզի և նախակրթարան դասարանների,այնպէս էլ բարձր դասարանների աշակերտները:

Աշակերտները ներկայացրեցին յատուածներ Դերենիկ Դեմիրճեանի << Վարդանանք>> և Վահան Թէքէեանի <<Խորհուրդ Վարդանանց>> ստեղծագործութիւններից;

As per tradition, every year in February the Feast of Vartanantz is commemorated at school as the Battle of Avarayr is noted for being one of the most significant battles in the Armenian History. An event that inspires us even after 1570 years and reminds us of the struggles we overcame to keep our national identity and culture. This year, due to the pandemic, our assembly took place online on Sunday 14th February. The pupils of different classes recited poems to glorify our national hero and this sacred battle.

The children realise very well that Vardan embodies the Armenian nation and the image of thousands of noble and courageous generals and soldiers of our Homeland.

Աշակերտների աշխատանքներ

Նախակրթարան Ա դասարան - ուսուցչուհի Տիկ Վիոլէթ Ղարիբեան
5 տարեկան երեխաների մաղթանքները մեր հայրենիքին

Աշակերտների աշխատանքներ

Իմ անունս Սէսիլեա Վարդանեան է: Ես ծնած եմ Լոնտոն, իմ Հայրենիքս Հայաստանն է:
Ես շատ սիրեցի մեր հայրենիքը, երբ անցեալ տարի ընտանեօք այցելեցի Հայաստան: Իմ կապս պիտի պահեմ իմ հայրենիքիս հետ կարդալով հայերէն գիրքեր, խօսիլ, գրել եւ երգել հայերէն: Երբ ես մեծնամ, կ'ուզեմ բժիշկ ըլլալ եւ երթալ Հայաստան օգնել հայերուն:
Սեպտեմբեր ամիսը եղաւ տխուր ամիս: Մեր հայերը կռուեցան ազրբպէճանցիներուն դէմ եւ հայ զինուորներ նահատակուեցան: Մենք միշտ իրենց պիտի յիշենք եւ աղօթենք իրենց սուրբ հոգիներուն համար:

Սէսիլեա Վարդանեան 7 տարեկան



Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանի դերը հայապահպանման գործում

Յաճախ հասարակութեան կողմից դպրոցն ընկալւում է որպէս մի տեղ, ուր երեխաներին տալիս են որոշակի գիտելիքներ: Իրականում դպրոցի մեծագոյն առաքելութիւնն է երեխաներին որոշակի արժէքներ դաստիարակելը:
Ազգային դպրոցը պէտք է ունենայ ազգային կրթական համակարգ և երեխաներին դաստիարակի ազգային արժէքներ:
Մեր վարժարանի կրթական համակարգի հիմնական գործառոյթը հետևեալն է, թէ ինչպիսի քաղաքացի, ինչպիսի հայ մարդ պէտք է կրթել և դաստիարակել: Վարժարանի կրթական համակարգը կառուցուած է խիստ որոշակի ազգային արժէքների հենքի վրայ: Այդ արժէքները գալիս են մեր ինքնութեան ակունքներից, որոնք մեզ դարձնում են հզոր և մրցունակ ազգ:

Խմբագիր՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան,
Անգլերէն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլխանճեան